

ԴԱՐՉՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ
ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

(Գլուխ, սիրտ, ձեռք կազմաբանություններով
դարձվածքների լեզվանյութի հիման վրա)

Բազմիմաստությունը միևնույն բառի մեջ իրար հետ կապված մեկից ավելի իմաստների առկայությունն է, որ առաջանում է սովորաբար այդ բառի սկզբնական իմաստի զարգացման հիման վրա: Այն լեզվի բառապաշարի պատմական զարգացման անխուսափելի հետևանքն է, լեզվի վիթխարի հարստության և, դրա հետ միաժամանակ, լեզվի խնայողության չափանիշը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում դարձվածաբանական բազմիմաստությունը և որոնք են դրա առաջացման պատճառները: Դարձվածայնացումը ոչ միայն լեզվաբանական, այլ նաև պատմական երևույթ է: Ժամանակակից լեզվում գոյություն ունեցող յուրաքանչյուր դարձվածք պատմական և իմաստաբանական երկարատև զարգացման արդյունք է: «Այս զարգացման ընթացքը առավել ակնհայտ հանդես է գալիս այն ակտիվ լեզվաբանական գործընթացում, որին ենթարկվում է դարձվածային միավորը՝ իր ողջ պատմա-իմաստաբանական զարգացման ընթացքում»¹: Դարձվածքները ծնվում, զարգանում, մահանում են, մեծ մասամբ, իմաստային գործոնների ազդեցության ներքո: Դարձվածքի իմաստային փոփոխությունների դիմամիկ գործընթացն էլ կարող է հանգեցնել դարձվածաբանական բազմիմաստության:

Ինչպես բառային, այնպես էլ դարձվածային կազմի համալրումը և հարստացումը ոչ միայն նոր միավորների, այլ նաև արդեն լեզվում գոյություն ունեցող բառային (տվյալ դեպքում դարձվածային) միավորների նոր իմաստների ձեռքբերման արդյունք է: Պայմանավորված լինելով ինչպես լեզվաբանական, այնպես էլ արտալեզվաբանական գործոններով դարձվածաբանական բազմիմաստությունը ունի իր յուրօրինակ առանձնահատկությունները: Իբրև կանոն այն կրկնակի վերաիմաստավորման արդյունք է: Հատկանշական է, որ դարձվածային միավորի իմաստային բնույթը և իրադրային վերաիմաստավորման ընդունակությունը նրա իմաստային կառուցվածքի լայնացման պատճառն է: Ինչպես հայերենում այնպես էլ ֆրանսերենում դարձվածքի նոր իմաստների ձեռքբերման պատճառ կարող են լինել կրկնակի վերաիմաստավորումը և գուգահեռ վերաիմաստավորումը:

Perdre la tête «գլուխը կորցնել» դարձվածքը, որն ունի իր համարժեքները շատ լեզուներում, սկզբնապես նշանակում էր «մահանալ, գլուխը վայր դնել»

¹ Назарян А.Г. Фразеология современного французского языка // Москва. «Высшая школа». 1987, с.208.

(Chanson de Roland, vers 44) XVII դարում, և միայն XVIII դարում ծեռք է բերում իր ժամանակակից իմաստները շնորհիվ կրկնակի վերաիմաստավորման: Այսօր ըստ Յա. Ռեցկերի «ֆրանս-ռուսերեն դարձվածաբանական բառարանի» այն ունի հետևյալ իմաստները՝

1.«գլուխը կորցնել, ինքն իրեն կորցնել, չփոթվել»

Seulement; elle perdait la tête; au point de ne pas comprendre les explications les plus claires... (E.Zola. «Au bonheur des dames»)

2.«խելը թոցնել» - *Monsieur Chenette avait 50 ans passés mais on lui aurait donné vingt de plus. Il commençait à perdre la tête et répétait souvent les mêmes histoires.* (P. Gamarra, «Rosalie Brousse»)

Ըստ Ա. Մ. Սուբխայանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի» նույն դարձվածքն ունի չորս իմաստ:

Գլուխը կորցնել 1.«մի որևէ բանից խուճապի մատնվել» 2.«իրար խառնվել, չփոթվել, մոլորվել» 3. «հաջողությունից ինքնամոռացության մեջ ընկնել».

4.«տրամաբանական քայլեր չանել, խելը թոցնել»

Պարզ է, որ այս դարձվածքի իմաստները իրարից այնքան էլ չեն տարբերվում, իրար կից են և դրանք կարելի է դիտարկել իբրև հոմանիշներ: Չնայած իրենց իմաստների նմանության, այնուամենայնիվ, դրանք որոշակի տարբերություններ ունեն: Վերջիններս տարբերվում են իմաստաբանական, գործառական, ոճական առանձնահատկություններով:

Կրկնակի վերաիմաստավորումը ենթադրում է փոխաբերական նոր իմաստի առաջացում դարձվածային միավորի հիմնական (առաջին) իմաստի հիման վրա: Քանի որ ինքը դարձվածքը բառերի ազատ կապակցության վերաիմաստավորման արդյունք է, ուստի և նոր փոխաբերական իմաստը համարվում է երկրորդային ի տարբերություն առաջին, հիմնական իմաստի:

Ելնելով վերաիմաստավորման բնույթից՝ առանձնացվում են հետևյալ տեսակի բազմիմաստ դարձվածքներ.

- դարձվածք երկու փոխաբերական իմաստներով

Avoir le cœur sur la main- 1.«մեծահոգի լինել» . *Le passé était le passé; n'est-ce pas? Si on conservait de la rancune après des neuf ans et des dix ans, on finirait par ne plus voir personne. Non il avait le cœur sur la main, lui!* (E. Zola, «L'Assommoir»).

2.«անկեղծ լինել» . *Je suis une vieille fille du peuple, j'ai le cœur sur la main.* (Honoré de Balzac, «Cousin Pons»).

- դարձվածք երկու փոխանվանական իմաստներով

Tête chaude(brulée) -1.«տաքգլուխ մարդ, շուտ հրապուրվող»

Mon frère Edmond me racontait encore hier que dans ses usines; les têtes brûlées amentent leurs camarades. (A. Wurmser, «L'Adolescence est le plus grand des maux»).

2.«տաքզլուխ, դյուրաբորբոր»։ *l faut excuser mon camarade, monsieur, fit Morhange, en s'avançant. Ce n'est pas un homme d'étude, comme vous. Un jeune lieutenant, vous savez cela a la tête chaude.* (P. Benoit, «L'Atlantide»).

դարձվածք մեկ փոխաբերական և մի քանի փոխանվանական իմաստներով։

Դարձվածքի կրկնակի պատկերային իմաստի ձևավորման գործընթացը կրկնակի վերաիմաստավորման միջոցով մտնում է բառային բազմիմաստություն, որտեղ գոյություն ունեն հիմնական և փոխաբերական (ածանցյալ) իմաստները։ Այնուամենայնիվ բարձր իմաստային վերացարկման առկայությունը, որը առաջին վերաիմաստավորման արդյունքն էր, դարձվածքները դարձնում է անգործուն հետագա վերաիմաստավորման համար։ Այս հանգամանքը բացատրվում է դարձվածային միավորի իմաստի լայնացման մեկ այլ գործընթացով, այն է՝ զուգահեռ վերաիմաստավորումը։

Tendre la main դարձվածքի իմաստները՝ 1.« օգնության ձեռք մեկնել»

Etienne écoutait le cœur fendu. Jadis, elle menaçait de les tuer s'ils tendaient jamais la main. (E. Zola, «Germinal»).

2.«ողորմություն խնդրել»։ *En 1904, en 1905; le gouvernement de Guillaume avait multiplié, de bonne foi, des offres d'entente, précises. Toujours, la France avait refusé la main que le Kaiser lui tendait.* (Roger Martin du Gard, «les Thibault»)

3.«ձեռքը երկարացնել առաջ բերելու, մի բան ցույց տալու նպատակով»

....Puis il tendait la main à Jacques avec un empressement courtois. (R. Martin du Gard; «Les Thibault»).

առաջացել են իրարից անկախ, բառերի ազատ կապակցության հիման վրա։

Հայերենում այս իմաստներից բացի *ձեռք մեկնել* դարձվածքը ունի նաև «ձեռք տալ, դիպչել» իմաստը, որը ևս զուգահեռ վերաիմաստավորման արդյունք է։ «Նա իրավ է հրդեհնց քո քաղաքը, կողոստոնց քո արքունիքը, բայց քո կանանցը ձեռք չմեկնեց, թե՛ն շատ հեշտ էր նրա համար բոլորին գնդի վարել Մյունիք (Բաֆֆի)»։

Զուգահեռ վերաիմաստավորման ժամանակ դարձվածքի նոր իմաստը (իմաստները) առաջանում է ազատ կապակցության հիման վրա, որի արդյունքում ի հայտ են գալիս դարձվածքի մի քանի առաջնակազմ իմաստներ։ Այդ դարձվածային իմաստները առաջանում են իրարից անկախ դարձվածի սկզբնական (նախնական) նշանակության հիման վրա։ «Այդ իմաստներից յուրաքանչյուրը կապված է տվյալ դարձվածային միավորի ազատ շարահյուսական համահարաբերականի (ազատ կապակցության) իմաստի հետ»։²

Զուգահեռ վերաիմաստավորման գործընթացը նաև դարձվածային համաճուրղության հիմնական աղբյուրն է։ Այս դեպքում դարձվածքի նախկին և նոր

² Степанова М.М. «О многозначности глагольных устойчивых словосочетаний в современном французском языке», Автореферат канд. дис, М. 1974.- с. 19.

իմաստները այնքան են հեռանում միմյանցից, որ այլևս չեն կապվում նույն դարձվածքի հետ և դիտվում են իբրև համանուն դարձվածքներ, ընդ որում համանուններից մեկը հենվում է բաղադրիչի մեկ, մյուսը այլ իմաստի վրա: Այսպես, **ծեռք քաշել** դարձվածքը նշանակում է «հրաժարվել, հետ քաշվել», իսկ նույն կառուցվածքով **ծեռք քաշել** խոսակցական լեզվի դարձվածքը է նշանակում է «ստորագրել»: Այստեղ **քաշել** բաղադրիչը առաջինում գործածված է «դեպի իրեն տանել» իմաստով, իսկ երկրորդում «գծել-գրել» իմաստով:

«Այժմ համոզված եմ, որ քո վիշտը աղբատությունը չէ, մինչև որ չաբսոլմես, **ծեռք չեմ քաշի քեզանից** (Ը): Ես անգրագետ մարդ եմ, ուզում եմ իմ տնդը **ծեռք քաշեցնեք** ու վասն անգրագիտության արևը» (Մ. Դ):

Դարձվածքների համանունությունը կարող է հետևանք լինել նաև ծագման աղբյուրների տարբերության: Այսպես, **գլուխ բերել** դարձվածքը «ավարտին հասցնել, **հաջողեցնել**» իմաստով հակադրվում է **ի գլուխ բերել** դարձվածքին, որ նշանակում է «մեծ գործ կատարել», ընդ որում առաջինում գլուխ բառը գրաբարյան ի մախդիրով է և հայցականով կապակցությունից է գալիս: Այսպես է նաև **ծեռք տալ** «ծեռնտու լինել» դարձվածքը, որն ունի երկու համանուն՝ «դիպել, խլել» և «օգնել, օգնության հասնել» իմաստներով: Ընդ որում վերջինս արևմտահայերենում է գործածվում:

«Աղջիկներ...դուրս եկեք, եկեք էստեղ, արք այսպնրը ծեզ ծեռք չի տա, արք ախպնրը բարի է (Ն.Թ.): Դժբախտ հաճգամանքները սրահանջում են քանդել այդ անջրպետը և **ծեռք տալ** հին բարեկամին (Դ)»:

Համանունությունը կարող է առաջանալ իմաստով տարբեր դարձվածքների բաղադրիչների ձևական նույնությամբ: Այսպես **ծեռքը բռնել** դարձվածքը «արգելել» իմաստով նման է **ծեռքը բռնել** «կարողանալ, գորել, ի վիճակի լինել» դարձվածքին: Իրականում, սակայն, **ծեռքը** բաղադրիչը ծագել է հայցականով կապակցությունից «մեկի ծեռքը բռնել, ոտքը բռնել», իսկ երկրորդում **ծեռքը** բաղադրիչը ծագել է ուղղականից «ծեռք բռնել»:

«Փոքր հասակից սովորեցի գողություն անել: Հայր չունեմ, որ **ծեռքս բռնեմ**, և ոչ էլ մայր ունեմ, որ լաց լինեմ իմ հնտկից... (Վ. Ար.):

Կինը համոզում էր, որ ձին ծախի, քայց ափսոսաց, **ծեռքը չբռնեց** (Թարգմ.)»:

Ֆորմաներենում դարձվածաբանական համանունությունը ամենավիճելի հարցերից մեկն է: Սասնագիտական գրականության մեջ այս խնդրի շուրջ տեսակետերը հակասական են: Ոմանք ընդհանրապես ժխտում են դարձվածաբանական բազմիմաստությունը, մյուսները բազմիմաստություն են տեսնում յուրաքանչյուր դարձվածքում: Բայց բանն այն է, որ համանուն կարող են լինել միայն նույն լեզվական մակարդակն ունեցող և նույն միկրոհամակարգին վերաբերող կազմությունները: Սրանից բխում է, որ «համանուն դարձվածքները պետք է լրիվ համընկնեն բառային և քերականական կազմով, միևնույն ժամանակ ունենան ոչ միայն տարբեր իմաստներ, այլ նաև տարբեր

պատկերային հիմք».³ Օրինակ կարող է ծառայել հետևյալ դարձվածքը: *Rendre la main* «ծիու սամծերը բաց թողնել, ազատություն տալ» իմաստով և «խաղաքարտերի կապուկը փոխանցել»: Այնուամենայնիվ, ֆրանսերենում կազմաբանական (սոմատիկ) դարձվածքների շարքում համանունությունը ավելի թույլ է արտահայտված քան հայերենում:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը ոչ բոլոր դարձվածային միավորներն ունեն այն իմաստային կառուցվածքը, որը թույլ է տալիս ձեռք բերել նոր իմաստներ և հանգել բազմիմաստության: Գերազանցապես մենիմաստ են այն դարձվածքները, որոնք ունեն նախադասության կամ ստորոգելիական միակցության շարահյուսական կառուցվածք, ինչպես նաև դարձվածային արտահայտությունները (առածա-ասացվածքային արտահայտությունները, թևավոր խոսքերը և այլն): Այս ամենը բացատրվում է նրանով, որ բարոյական խրատներին, ինքնատիպ և խոր մտքերին, ինչպես օրինակ *Loin des yeux; loin du cœur* «Աչքերից հեռու, սրտից դուրս» կամ *Grosse tête, peu de sens* «գլխից հաստ, խելքից բոքիկ», հատուկ չէ լեզվական ճկունությունը այն չափով, որը հատուկ է բառակապակցությունների դարձվածային համարժեքներին: Բազմիմաստությունը թույլ է արտահայտված նաև կրկնավոր բարդություններում (բառածևային տարբերակներով): Կարելի է ենթադրել, որ այստեղ էլ բազմիմաստ դարձվածքների քանակի պակասը կապված է իրենց գործառական առանձնահատկության հետ: Նրանք ունեն բավականին հստակ և սահմանափակ զուգակցվողություն, որն էլ խոչընդոտում է իրադրական վերաիմաստավորմանը: Եվ ֆրանսերենում, և հայերենում *main dans la main* «ծեռք ձեռքի» դարձվածքը ունի երկու իմաստ: Մի դեպքում «ծեռք ձեռքի տված, միասին» *Marguerite et Jean, main dans la main, faisaient leur voyage.* (P. Daix, «Dix-neuvième printemps»).

Մյուս դեպքում «միասին, համերաշխ» *Je n'ai pas la naïveté de croire que le temps des guerres est fini, que le monde compte vivre la main dans la main.* (J. Cocteau, «Lettre aux américains»). Դրան հակառակ *de la main à la main* «ծեռքից ձեռք, առձեռն», *de mains en mains* «ծեռքից ձեռք, անմիջաբար», *main sur main* «արագ» դարձվածքները մենիմաստ են: *Elle avait d'abord exigé cinq cents francs, payables de la main à la main au moment où elle lui ouvrirait la porte de la chambre.* (E. Zola, «L'argent»). *Les derniers numéros des journaux d'apposition autrichiens et allemands qui étaient arrivés ce matin même de mains en mains.....* (R. Martin du Gard, «Les Thibault»).

Սակայն դարձվածաբանության մեջ կան միավորներ, որոնց համար բազմիմաստությունը հաճախորդ էլ երևույթ է: Դրանք այն դարձվածքներն են,

³ Назарян А.Г. Фразеология современного французского языка // Москва. «Высшая школа». - 1987. - с.236

որոնք իրենց «կառուցվածքով նման են բառակապակցություններին»:⁴ Սրա պատճառն այն է, որ այս կարգի դարձվածքները հանդես են գալիս իբրև նախադասության որևէ անդամ, ունեն առավել լայն արժութական կապեր, հետևաբար իրադրական վերախմաստավորման ավելի մեծ հնարավորություն: Վերջինս նրանց հատուկ է ոչ այն մեծ չափով, որքան բառային միավորներին, բայց այն տեղի է ունենում կանոնավոր կերպով: «Յուրաքանչյուր դարձվածք կարելի է դիտել բազմիմաստության նյութ, բայց դարձվածայնացման գործընթացը անկանխատեսելի է և չի ենթարկվում կանոնավորման»:⁵

Մենք չենք կարող նախապես ասել, թե ո՞ր դարձվածքը -կարող է դառնալ բազմիմաստ և ավելին, քանի իմաստ այն կարող է ունենալ: Յուրաքանչյուր իմաստի ի հայտ գալուն պես մեծանում է դարձվածքի օգտագործման հաճախականությունը: Իսկ որքան շատ է օգտագործվում դարձվածքը, այնքան շուտ է այն «մաշվում», թուլանում է նրա պատկերային կառուցվածքը, որի հետևանքով էլ փոքրանում է դարձվածային միավորի արտահայտչական ազդեցությունը: Դարձվածաբանական համակարգը «չի հետաքրքրվում տվյալ գործընթացով, հետևաբար և չի խթանում դարձվածաբանական բազմիմաստությունը»:⁶ Ըստ Յա. Ռեցկերի «Ֆրանս-ռուսերեն դարձվածաբանական բառարանի» սիրտ, գլուխ, ձեռք կազմաբանություններով դարձվածքների մոտ բազմիմաստությունը կազմում է 13 %, իսկ հայերեն լեզվում ըստ Ա. Մ. Սուքիասյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի» այն կազմում է ավելի քան 18 %: Այսպիսով, բազմիմաստությունը գերազանցապես հատուկ է մի խումբ դարձվածային միավորներին՝ դարձվածաբանական միասնություններին և միակցություններին, որոնք ունեն իրադրական վերախմաստավորման հնարավոր ընդունակություն: Բազմիմաստ դարձվածքների իմաստներն իրար կից են: Բազմիմաստ դարձվածային միավորների առաջացումը պայմանավորված է կրկնակի և զուգահեռ վերախմաստավորմամբ:

Բազմիմաստ դարձվածային միավորների առաջացումը զուգահեռ վերախմաստավորման միջոցով դարձվածաբանական բազմիմաստության զարգացման արդյունավետ գործընթաց է: Դարձվածաբանական բազմիմաստության ժամանակ առավել կերպով ի հայտ է գալիս իմաստի և կառուցվածքի, շարահյուսական կապի փոխադարձավորվածության լեզվական ընդհանուր օրինաչափությունը:

Իմաստային չափանիշը բազմիմաստ և համանուն դարձվածքների տարբերակման հիմնական միջոցն է:

⁴ Шапский Н.М. Фразеология современного русского языка.// М., 1985.- с.43.ավելի

⁵ Назарян А.Г. Фразеология современного французского языка // Москва, «Высшая школа».- 1987.-с.213.

⁶ Նույնը, էջ 214: